

սելի է. քանի որ զրգվագ բառը արդի հայերենում բազմիմաստ է: Այսպես, ժամանակակից հայերենի բացատրական բառարանում զրգվագն ունի երեք իմաստ, իսկ է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» բերված է 7 իմաստ: Աինչդեռ հատուկ ուշադրություն է պահանջում է տերմինին անհրաժեշտ մեկնաբանության պայմանին: Նույնը կարելի է ասել Հովսեփյանի գործերում հաճախ հանդիպող նշանակ տերմինի մասին, որը նա կիրառում է սիմվոլ բառի փոխարեն:

Առաջնությունը լույս ածած ժողովածուն մեկ անգամ ևս վկայում է, որ Գարեգին Հովսեփյանի ծագությունը հայ արվեստի ուսումնասիրության մեջ ընդհանրապես, նրա տերմինալին բառապաշարի ստեղծման գործում՝ մասնավորապես, անուրանալի է:

Գիտական այն մեծ ժառանգությունը, որ քնդել է Գարեգին Հովսեփյանը, ինչ խոսք, հնարավոր չի ընդգրկել երկու հատորում: Գրախոսվող ժողովածուում տեղ են գտել գիտնականի արվեստաբանական հոգվածները: Սակայն հայտնի է, որ Գ. Հովսեփյանի երկերում ասելի հաճախ պատմա-ազգագրական, քանադական նյութը միահյուսված է արվեստաբանականին: Այդ իսկ պատճառով ժողովածուն կազմողը հավանություն չի տվեցել երկ-հատորյակում ամփոփել գիտնականի բոլոր այն երկերը, որոնք նվիրված են հայ մշակույթի պատմությանն ընդհանրապես, ուստի

անհրաժեշտություն է դարձել մյուս բնագավառներին առնչվող նրա աշխատությունների հրատարակությունը: Այդ դեպքում միայն հրապարակելի է ինչի ասել, որ հայ մշակույթի մեծ էրախտավորներից մեկի՝ Գ. Հովսեփյանի երկերը, որոնք ցայսօր սփռված են հայրենական ու արտասահմանյան բազմաթիվ հանդեսներում, ամսագրերում, մեծ ու փոքր բազմաթիվ պրակներում, ի մի են բերվել, մատչելի դարձել հայ մշակույթի հարցերով պաշտոնյաների համար:

Առաջիկա ընթերցողի սեղանին է Գարեգին Հովսեփյանի երկերի երկհատորյակի Ա հատորը, որ ընդգրկված ուսումնասիրությունները հարուստ նյութ են պարունակում հայ մշակույթի պատմությանը զբաղվողների համար: Նրանում կան մանրանկարչական, գեղանկարչական գործերի, հայ կիրառական արվեստի նույնիսկ բազմաթիվ վերատալանդներ, որոնք ժամանակին հեղինակը ներառել է իր ուսումնասիրություններում: Պահաս կարևոր է այն հանգամանքը, որ այդ հարուստ նյութը մատուցվում է ամբողջական տեսքով, նաև առավել մատչելի է ուղղագրական տեսակետից: Ահա առավելություններ, որ ունի Գարեգին Հովսեփյանի երկերի ներկա հրատարակությունը:

Մ. Խ. ԳՅՈՒՆԱՉԱՐՅԱՆ

Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, ՀՍՄՀ ԳԱ հրատարակություն, Երևան, 1985, 328 էջ

Մեր գրական լեզվի երկու տարբերակներին նվիրված դուգադրական-տիպաբանական առաջին ամբողջական ուսումնասիրությունն է, որում քանակական ու որակական մեթոդների կիրառմամբ քննվում են արդի հայերենի երկու գրական տարբերակների կառուցվածքային ընդհանրություններն ու առանձնահատկությունները և ճշտվում արդի հայերենի գիրքը աշխարհի լեզուների ընդհանրական տիպաբանական դասակարգման սխեմայում: Առաջ անցնելով ասենք, որ սույն ուսումնասիրությանը ևս հաստատվում է այն տեսակետը, որ գրական արևելահայերենն ու արևմտահայերենը ոչ թե առանձին լեզուներ են, այլ մեկ ազգային լեզվի՝ արդի հայերենի երկու տարբերակներ: Այդ եզրակացությունը արվել է և՛ արևելահայերենի, և՛ արևմտահայերենի համակարգային երևույթների, էական հատկանիշների հիման վրա՝ չլուրձարանչուր իրակություն քննելով ըստ լեզվաբանական, ձևաբանական, շարահյուս-

ական մակարդակների և քննությունը տանելով արտահայտության սլանից դեպի բովանդակության սլանը: Բոլոր դեպքերում որպես համեմատության եզր ընտրվել են երկու գրականների միջև եղած տարբերությունները: Իսկ դա հնարավորություն է ընձեռել պարզելու երկու գրականների մերձավորության աստիճանը և սշխարհաբար լեզվի զարգացման ընդհանուր ուղղվածությունը: Ա. Սարգսյանն ուսումնասիրությունը կատարել է միայն գրական տարբերակների նյութի հիման վրա՝ առանց լեզվի լեզվաբանական քննարկման ծիրի մեջ առնելու նաև խոսակցական գրաբանությունը: Սույն հետազոտության համար նախապես հեղինակի կողմից ուսումնասիրվել են կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության ուսուցչական կազմի ու սովորողների գրական կանոնական խոսքը, կիպրահայ ռադիոժամերի արտասանական օրինաչափությունները և Մերձավոր Միջին Արևելքի հայաշատ գաղութների գրական

խոսքը: Ընդգրկվել է XX դարի նյութը, որը բաժանվել է երկու փուլի՝ ա) նոր (դարասկզբից մինչև 50-ական թթ.) և բ) նորագույն (մինչև մեր օրերը): Երկու գրականների ինչպես հնչյունական, այնպես էլ քերականական հատկանքների փոփոխությունը զուգահեռ է հեղինակն օգտվել է ժամանակակից հայագիտության մեջ մշակված, մասնավորապես ակադեմիկոս Գ. Զահուկյանի բազմահատկանիշ մեթոդից:

Երկու գրականների հնչյունական համակարգը քննելիս հեղինակը հենվում է հնչույթային կառուցվածքի վրա՝ զուգահեռությունը տանելով ըստ հարացույցի և շարակարգի: Եթե հարացույցում սովորում են հնչույթների տարբերիչ հատկանիշները, ապա շարակարգում՝ հնչյունների վիճակագրությունը, նրանց գործառական բեռնվածությունները: Եզրակացվում է, որ ձայնավորական համակարգը երկու գրականներում էլ նույն պատկերն է ներկայացնում, իսկ տարբերությունները հանդես են գալիս բաղաձայնական ոլորտում: Արևելահայերենի հնաշարք բաղաձայնների դիմաց արևմտահայերենում առկա է երկշարք բաղաձայնական համակարգը (այնտեղ սլ, կ, տ, ծ, ց պարզ խուլերը վերացել են): Հնչույթային համակարգի առաջնային և երկրորդային տարրերի հարաբերությամբ ստացված արդյունքներով մեր երկու գրականներն էլ դասվում են լեզուների բաղաձայնական խմբին: Շարակարգային հնաշարքությունը, այսինքն՝ հնչյունների գործառություն և բեռնվածության քննությունը պարզում է, որ նույն լեզվի տարբեր փուլերի (գրաբար, աշխարհագրորդ) հնչյունական վիճակագրական պատկերը հիմնականում նույնն է, թեև արևմտահայերենը բաղաձայնական հարաբերության մեջ հակվում է դեպի ձայնավորային լեզուների խումբը: Երկու գրականներում էլ ամենահաճախական հնչյունները նույնն են՝ ա, ե, ն, ր: Լեզվական տիպաբանական տվյալների հավաստմամբ մեր երկու գրականները հնչույթների քանակով, ձայնավոր—բաղաձայն հարաբերության հատկանիշներով միջին դիրք են գրավում աշխարհի լեզուների շարքում: Հայերենը խիստ սահմանափակ բաղաձայնական կուտակումներ ունեցող լեզու է: Երկու տարբերակում էլ վանկի ամենահաճախական տիպը բաղաձայն—ձայնավոր երկհնչույթ բաց վանկն է:

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բառերի միջին երկարությունը տեքստում ավելի մեծ է, քան բառարանում, որը սլաշմանավորված է հայերենի թեթույթների (հոլովման և խոնարհման վերջամասնիկների) կցական բնույթով (թեք ձևերում բառերը առնվազն մեկ վանկով երկար են):

Ի տարբերություն արևելահայերենի, որը հիմնական զգեցող պահանջում է գրաբարյան հնչյունափոխության կանոնները, արևմտահայերենի հայտ է բերում երկու կարգի տարբերություններ՝ ա) թեքման (հատկապես հոլովման) ժամանակ հիմքը անփոփոխ պահելու ձգտումը, օրինակ՝ տուն—տուններու, մուկ—մուկներու, ջուր—ջուրներու, սիրտ—սիրտներու, կից—կիցներու և այլն, բ) բառակազմական հիմքերը հնչյունափոխելու միտումը՝ կլանել—կլլել, անկա—նկ—ընկնել—իլնալ և այլն: Գաղտնավանկի արտասանվող ր-ի պատճառով խոսքի տեմպը արեւելահայերենում ավելի դանդաղ է, քան արևմտահայերենում:

Տիպաբանական-զուգահեռական քննությամբ հաստատվում է, որ երկու գրականների ուղղագրության սկզբունքները հնչույթային են: Ընդ որում արևելահայերենի հնչյուն (հնչույթ)—տառ հարաբերությունը ավելի հետևողական է, քան արևմտահայերենին:

«Բառագիտություն» բաժնում շեշտվում է այն միտքը, որ երկու գրականների բառապաշարը քննելիս չպետք է բավարարվել բառերի արտաքին կոդին նույնությամբ, նշելով, որ երկուսում էլ առկա են տվյալ բառերը, այլ հարկաւոր է վեր հանել այդ բառերի տարբեր նշանակությունները, ծավալային հարաբերությունները: Յուրյն է տրվում, որ երկուսում էլ բառապաշարի հարստացման միջոցները նույնն են՝ ներքին և արտաքին: Ներքին միջոցներն են բառակազմությունը (բառարարգումը և ածանցումը), իսկ արտաքինը՝ փոխառությունները: Երկուսում էլ գերիշխում է բառակազմության կազմապարհների համադրության եղանակը, ի հակադրություն վերլուծականության: Բառակազմության ժամանակ մեծ տեղ է գրավում մասնիկավորումը, որը կցականության ցուցիչ է: Հեղինակը մեկ առ մեկ քննում է բառակազմության միջոցները՝ բառարարգումը, ածանցումը: Արդի հայերենի ածանցների լիակատար ցանկի դուգահորումից եզրակացվում է, որ երկու գրականն էլ ածանցական ոլորտում նույն պատկերն ունեն, գործոն և ոչ գործոն ածանցների շարքերը լիովին համընկնում են. երկուսում էլ ամենահետևողական ածանցներն են ան միտակալ նախածանցը և -ութուն վերջածանցը: Կան մասնակի տարբերություններ. օրինակ, արևելահայերենում կա փոխառյալ -իստ ածանցը (մաւր-իստ, կոմունիստ), որը չկա արևմտահայերենում, իսկ այնտեղ էլ կան կեկ (կակ), շի ածանցները (լայնկեկ, մեծկակ, լայնշի), որոնք չկան արևելահայերենում:

Տեքստաբանություն հարցերը եթե արևելահայերենում պետական ուղղություն առարկա

են, ապա այդ բանից զուրկ է արևմտահայերենը: Այդ է պատճառը, որ էթն արևելահայերենը ձգտում է տերմինների միանշանակության ու միաձևության, ապա արևմտահայերենում առկա է տերմինների բազմաձևության ու հոմանիշության երևույթը: Երկու գրականները զգալի տարբերություններ ունեն աշխարհագրական անվանումների ոլորտում. օրինակ՝ Դանիա—Տանիմարբա, Բելգիա—Պելճիբա և այլն: Լեզվի զոյապայքարի պատճառներով պայմանավորված՝ արևմտահայերենը առաջնորդվում է լեզուն օտար փոխառություններից հեռու պահելու սկզբունքով:

Երկու գրականներում էլ բառային հիմնական շերտերը նույնն են՝ գրաբարյան, միջին հայերենյան և բարբառային բառեր: Այնուամենայնիվ, արևմտահայերենը համեմատաբար հաճախ է դիմում գրաբարյան բառերին, դարձվածաբանական միավորներին, նախդրավոր կապակցություններին. այսպես, օրինակ՝ զառչանել, ահապարանոք, առ ի չգոյն, ըստ կառելվույն, միով բանիվ, հավան և հանվան և այլն: Բառապաշարային և քերականական տարբերություններ ունեցող բառաձևերի համադրությունից պարզվում է, որ գրական տարբերությունների մի զգալի մասը արդյունք է նույն հնարավորությունների տարբեր իրացումների: Արևելահայերենում գործածվող միջազգային մի շարք տերմիններ (կենգրուո, անտեմա, չեմպիոնատ, բանկ և այլն) փոխարեն արևմտահայերենն օգտագործում է դրանց հայերեն սլոնանումները՝ ալգիվազ, ալինավալ, ախոյանուրյուն, դրամատուն, կամ էլ կատարվում են տարբեր բառապատկերներ՝ պատգամավոր—բանագնադ, գործաբան—գործատուն, բուզգամաբա—կրոփամաբա, հեռախոս—հեռաձայն, հաղորդավար—խոսնակ և այլն:

Քննելով երկու գրականների գործառական ուժերը (առօրյա-խոսակցական, գեղարվեստական, դիտական, հրապարակախոսական, վարչագործարարական)՝ հեղինակը հանգում է այն ընդհանուր եզրակացությանը, որ դրանք ավելի հասակ տարբերվածություն ունեն արևելահայերենում, քան արևմտահայերենում: Այս բնագավառում կարևոր են նաև հեղինակի նետելալ նետությունները՝ ա) արևմտահայերենի առօրյա-խոսակցական ոճը համեմատաբար ավելի մոտ է գրական-գրավոր տարբերակին, քան արևելահայերենին և բ) արևելահայերենում գիտական ոճի լայն ներառվորություններ կան:

Բառարարգման ընթացքում արևելահայերենը ձգտում է հարաբերաբար բարդին (բաղադրադրիչ բառերին), իսկ արևմտահայերենը՝ պարզին, հնարավորին չափ կարճ բառաձևերին. այստեղից էլ բառակազմության ոլորտում վեր-

լուծականության գերակշռությունը արևելահայերենի համադրականության փոխարեն: Ըստ բառիմաստի ծավալի՝ արևելահայերենը ձգտում է դեպի կոնկրետ, իսկ արևմտահայերենը՝ վերացական: Բառի տրամաբանական և հուզաարտահայտչական երանգավորումների առումով արևելահայերենը միտում է դեպի տրամաբանականը, իսկ արևմտահայերենը՝ հուզաարտահայտչականը:

«Քերականություն» բաժնում ցույց է տրվում, որ երկու գրական լեզուների հիմնական տարբերությունները հանդես են գալիս ոչ թե քերականական կարգերի առկայությամբ կամ բացակայությամբ, այլ միևնույն քերականական կարգերի ծավալի (ընդգրկման) սահմաններում, ենթակարգերի թվի հարցում և այլն: Օրինակ, երկու գրականում էլ առկա է ի նոտվումը, բայց ընդգրկմամբ այն տարբեր է (արևելահայերենն ունի հիմնականում ի-ով նոգնակի, արևմտահայերենը՝ միայն ու-ով): Բացի դրանից, նույն բովանդակությունն արևմտահայերենն արտահայտում է ավելի շատ վերլուծականությամբ (հիշենք, օրինակ, ներգույականը՝ գիրքն մեջ):

Արտահայտության և բովանդակության պլանների հարաբերության քննությունն ի հայտ է բերում երեք տիպի՝ հարացուցային, շարակարգային և նշանաբանական խախտումներ: Ձևաբանության բաժնում հեղինակը համակարգայնորեն քննում է խոսքի մասերը՝ երկու գրականներին հատուկ քերականական կարգերով՝ դուզադրելով յուրաքանչյուրին բնորոշ իմաստային և ձևական համապատասխան հատկանիշները: Երկու գրականներում խոսքի մասերի քանակը տարբեր է. արևմտահայերենը թվականը առանձին խոսքի մաս չի դիտում, այլ այն մտնում է ածականի մեջ՝ ածական թվական: Հիմնական խոսքի մասերը միմյանցից տարբերվում համար հեղինակը կատարում է երեք կարգի դուզադրություններ՝ իմաստային, ձևաբանական (ըստ քերականական կարգերի) և շարահյուսական (ըստ նրանց գործառության նախադասության մեջ), որոնցից, մյուս լեզվաբանների նման, կարևոր դերը հատկացնում է ձևաբանականին:

Հոլովակազմության և հոգնակիակազմության համադրությունը ուղարկում է, որ դրանք երկու գրականում էլ բնորոշվում են կցական տիպաբանությամբ, իսկ երբեմն հանդես եկող ներքին թերման ձևերը ոչ համակարգային երևույթներ են: Հոլովման պատկերը երկուսում էլ նույնն է, տարբերությունները հանդես են գալիս միայն բացառական նոլովում:

Հոգային կարգը (որոշակություն/անորոշություն, ցուցականություն, դիմորոշություն և ստացականություն) երկու գրականներում էլ

Հիմնականում նույնը լինելով՝ առանձին ենթակարգերում ի հայտ են գալիս մասնակի անհամապատասխանություններ, ինչպես՝ անորոշություն՝ մի—մը, ստացականություն՝ իմ խոսքը—իմ խոսքս:

Համապատասխան սխեմաների ու բառացանկերի համադրմամբ եզրակացվում է, որ արևմտահայերենի բայական համակարգը ղգալիորեն բարդ է և միօրինականացմամբ ու պարզեցմամբ զիջում է արևելահայերենին: Բայի համակարգը երկու գրականներում էլ թեև բնութագրվում է վերլուծականությամբ, բայց արևմտահայերենը ավելի շատ հակվում է դեպի համադրականությունը (օրինակ՝ կ'երթամ—զնում եմ և այլն): Արևելահայերենի երկու լրծորդությունների (եյլ, —ալ) դիմաց արևմտահայերենում առկա են չորսը՝ եյլ, —իլ, —ալ, —ուլ: Արևմտահայերենում բացակայում է անկատար դերբալը, բայց դրա փոխարեն հարակատար դերբալ ունեն նաև ներգործական սեռի բայերը (տեսած եմ): Կ(ր) և պիտի եղանակիչները ունեն տարբեր գործառույթ. արևելահայերենում եղանականիշ են, իսկ արևմտահայերենում՝ ժամանականիշ: Արևմտահայերենն ունի շարունակական ներկա (կու գա կուր, կը մնա կուր), որից պուրկ է արևելահայերենը:

Միմյանց հետ համադրելով արդի հայերենի տարբեր փուլերի (անցյալ դարի վերջ, XX դարի սկիզբ, 60—70-ական թթ.) գրական նմուշներ՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ եթե երկու գրականների բառապաշարը բունութաբարվում է մերձեցման (փոխներթափանցման) որոշակի միտումով, ապա ձևաբանական կառուցվածքների միջև նկատելի մերձեցում չի եղել, ավելին. տեղի է ունեցել ընդհանրությունների նվազում (էջ 243):

Ձուգադրությունը պարզում է, որ շարահյուսական մակարդակում երկու գրականների ընդհանուր գծերը ավելի ցայտուն են բովանդակության պլանում: Իսկ ղուգադրելու ընթացքում կիրառվում են ինչպես ավանդական, այնպես էլ առարկայական տրոհման և շարահյուսական տիպաբանության մեջ գործածվող ժամանակակից այլ մեթոդներ: Որպես քննության միավոր ընդունվում են բառակապակցությունն ու շարահյուսությունը: Այստեղ ևս գտնում ենք ուշագրավ դիտողություններ. օրինակ՝ նախադասության գծային կարգը (հաջորդականությունը) կառուցվածքային կարգից տարբերվել, որովհետև միշտ չէ, որ այդ երկու կարգերը համընկնում են: Իսկ «նախադասության բառերի կարգի բազմակողմանի ուսումնասիրությունը կարող է վերահանել կառուցվածքային, գործառական, ոճական շատ առանձնատեսություններ, որոնք մեծ դեր ունեն լեզուների տիպաբան-

կան բնութագրման գործոմ», — գրում է Ա. Սարգսյանը (էջ 254):

Ըստ շարահյուսության կան լեզուների երեք տիպեր.

1. Լեզուներ, որոնք բնութագրվում են բացարձակ ազատ շարահյուսությամբ:

2. Լեզուներ, որտեղ բառային կարգը կաուն է:

3. Լեզուներ, որտեղ բառերի կարգը ամրակալված է և բացավում է շարահյուսության փոփոխությունը (էջ 263):

Երկու գրականներն էլ մտնում են երկրորդ խմբի մեջ. ընդ որում արևմտահայերենը համեմատաբար ավելի մոտ է երրորդ խմբին:

Նախադասության տրոհումը թեմայի և ռեմայի կոչվում է նախադասության առարկայական տրոհում: Թեման հաղորդում է առարկան, նյութը, իսկ ռեման՝ տեղեկություն է տալիս թեմայի մասին: Ա. Սարգսյանը քննադատում է այն մասնագետներին, ովքեր շարահյուսությունը քննելիս օգտագործում են ազատ, հիշում բնորոշումները, որովհետև «...երբ փոխվում է բառերի կարգը, հիմնականում փոխվում է նաև նախադասության (ասույթի) բովանդակությունը» (էջ 265): Շարահյուսությունը քննվում է երկու որոշակիորեն տարբերակված խմբերով՝ հեղու խոսք և հուգաառուսալուչալկաառուհե երանգավորված խոսք ու եզրակացվում, որ շեղոք ոճերին՝ գիտական, գրագրային (գործավարական) խորթ է շրջուն շարահյուսությունը: Երկու գրականներում էլ շեղոք ոճում թեման նախորդում է ռեմային: Իսկ դա, ըստ հեղինակի, հնդկարական լեզուներին հատուկ տիպաբանական ընդհանրույթ է:

Լեզվաբանության մեջ լեզուների համար օգտագործվում են բառերի դասավորության երեք հիմնական ձևեր՝ 1-ին VSO, 2-րդ SVO, 3-րդ SOV (S—ենթակա, V—ստորոգյալ, O—խնդիր): Մեր երկու գրականներն էլ մտնում են երկրորդ խմբի մեջ, թեև 3-րդ խումբն էլ խորթ չէ հայերենին:

Ամբողջ ղուգադրությունից արվում է հետևյալ ընդհանուր եզրակացությունը. «Մեր աղգային լեզվի երկու թևերը սնունդ են ստացել մի ընդհանուր «արյունասուր համակարգից»՝ հալոց լեզվից և հանդիսանում են նրա կենդանի երկու գրական վիճակները՝ պետական լեզվի աստիճանի բարձրացրած առևկաալկաերն և իր գոյապայքարում, մաքառումների ճանապարհին ներկայումս նրան ապավինող առևմտաալկաերնը» (էջ 294, ընդգծումները իրենն են—Գ. Թ.):

Ինչպես ամեն մի աշխատություն, այնպես էլ սույն մենագրությունը, մասնավորապես որ այն իր տեսակի մեջ առաջինն է, գերծ չէ թերություններից: Գիրքն ավելի անթերի տեսնելու ցան-

կոթյալ կուղենք նշել զրանցից մի քանիսը: Աշխատության 7-րդ էջում Հեղինակը գրում է. «Հայոց ազգը մեկ ազգային լեզու ունի՝ ժամանակակից Հայոց լեզուն իր երկու գրական դրսևորումներով, որոնք մեր Հետագա շարադրանքում կներկայացվեն զրական լեզու (ընդգծումը իրենին է—Գ. Բ.) Երրորդումով, ուր լեզու տերմինը որոշ պայմանականություն ունի»: Եթե Հայոց ազգը մեկ ազգային լեզու ունի (և դա իրականում այդպես է), ապա ինչո՞ւ դիրքը վերնագրել «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ» և շարադրանքում էլ, առանձին տեղերում (էջ 112, 158, 159 և այլն) գործածել լեզուներ տերմինը, երբ կարելի էր վերնագրել «Արդի Հայերենի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակներ» և այդպես էլ վարվել ամբողջ շարադրանքում:

Քերականագիտության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ զերանուիր դասվում է իմանական կամ նյութական խոչը մասերի շարքը (տե՛ս, օրինակ, Ս. Արարձմյան, Ժամանակակից գրական Հայերեն, Երևան, 1981, էջ 130), բայց Ա. Սարգսյանը դերանունը մըտքնում է երկրորդական խոսքի մասերի մեջ (էջ 169):

201-րդ էջում կարգում ենք. «Երկու գրականներում էլ՝ 1. նկատվում է որոշիչ հոգի կիրառության որոշ սահմանափակություն (մասնավորապես արևելահայերենում բացառական և գործիական հոլովների դեպքում)»: Մինչդեռ Հայտնի է, որ գրական արևելահայերենում իշխող հոլովները որոշիչ հոգ չեն ընդունում:

Բայի սեռերի մասին խոսելիս առաջընթաց են չեղոր, անանցողական (էջ 253) և ներգործական, անցողական (էջ 255) գույգերը, բայց մի՞թե չեղորը չի մտնում անանցողականի, իսկ ներգործականը՝ անցողականի մեջ:

Մեր գիտողությունների մի մասը կրում է սասնակի բնույթ: Այսպես՝ շարադասության ընդհանրական կաղապարներին (VSO, SVO, SOV) առաջին անգամ Հանդիպում ենք 251-րդ էջում, բայց դրանց բացատրությունը տրվում է բավական ուշ (էջ 285):

Գրքում կան կրկնություններ: Երբեմն նույն միտքը գրեթե նույնությամբ կրկնվում է մի բանի էջերում: Այսպես, օրինակ՝ ձայնավոր հընչյունների շրջանայնության Հավելորդայնությունը Հայերենում (էջ 20, 21, 23), կ(ը) և պիտի եղանակիչների տարբեր դործառությունները (էջ 229, 230, 232, 233, 243), Հարակատար դերբայը (էջ 226, 227, 261), արևմտահայերենի ու խոնարձման բայերը (էջ 214, 215, 218):

Խոսքի մասային տերմինին Հանդիպում ենք մեկ այդ, մեկ՝ խոսքի մասային ձևով, նույնիսկ նույն էջի վրա (էջ 104):

Առանձին էջերում Հանդիպում ենք վրիպակների:

Այնուհանդերձ, նշված թերությունները չեն արժեղորում սույն աշխատությունը, և այն, իրո՞ք, կարող է օգտակար լինել ոչ միայն լեզվաբանների ու Հայագետների, այլև արդի Հայերենի գրական երկու տարբերակներով հետաքրքրվողների համար:

Գ. Բ. ԹԱՍՈՒՆՅԱՆ

Ս. М. МУРАДЯН. *Армянская эпиграфика Грузии (Картли и Кахети)*. Изд-во АН АрмССР, Ереван, 1984, 227 с.

Среди армянских эпиграфических памятников лапидарные надписи на территории Грузии составляют небольшую и вместе с тем важную группу. В силу целого ряда обстоятельств армянская эпиграфика Грузии отличается большой информативностью и этим вызывает несомненный научный интерес. История издания и изучения армянских лапидарных надписей Грузии насчитывает два столетия, и тем не менее кавказоведы-армянисты не располагали хотя бы сводом армянской эпиграфики Грузии. Рецензируемая монография восполняет давно наметившийся пробел в кавказоведческой литературе и двух отношениях — вполне заменяет «Корпус армянских надписей Грузии» (разумеется, в пределах Картли и Кахети) и одновре-

менно является основательным исследованием значительной части этих надписей.

Выбор П. М. Мурадяном Картли и Кахети в качестве исследуемого региона вполне оправдан исключительной ролью этих восточногрузинских провинций в истории грузинского народа и традициями контактов армян с их населением. Особенно притягательной были для переселенцев-армян поселения сердцевин Грузии — Картли. Шестнадцать из восемнадцати этюдов, составивших книгу, посвящены картлийским городам и селам, среди них пользующимся большой известностью Михете, Уплисхихе, Гори, Аteni, Азизури. Из кахетинских поселений наиболее заметный след в виде культовых сооружений и эпиграфических памятников